

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Խանջյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-1): Առաջատար մասնագետը

աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը, լրացնում է համապատասխան փաստաթղթեր, ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, հանդես է գալիս առաջարկություններով, նախապատրաստում է տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

Իրականացնում է իր գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները, կազմում և ներկայացնում է համայնքի բյուջեի նախագիծը, ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը, կազմում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու որոշման նախագիծը, իրականացնում է համայնքապետարանի հաշվապահական հաշվառման վարումը, վճարման փաստաթղթերի կազմումը, ամսեկան, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները կազմում և ներկայացնում է համապատասխան մարմիններին: Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ, ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն: Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «Բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» «Գույքահարկի մասին» «Հողի հարկի մասին», «Գնումների մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն: Ունի համակարգչով և

ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2020թվականի փետրվարի 20-ին ժամը 12<sup>00</sup>-ին Խանջյանի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Խանջյանի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթեր.

- \_ Դիմում՝ մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/:
- \_ Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենների բնօրինակների հետ միասին:
- \_ Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019թ. –ի փետրվարի 15-ի N 98-Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
- \_ Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային, տեղամասային կցագրման վկայականի պատճեններ:
- \_ Մեկ լուսանկար 3X4 չափի:
- \_ Անձնագրի պատճեն:

Մրցույթի մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարի ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Խանջյանի համայնքապետարան 5 փ. 7 շենք:

Հեռ. 093-66-75-77 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն՝ Ք. Արմավիր, Արովյան 71, հեռ. /0237/2-07-70, /0237/2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր 09:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մինչև 2020թ. Փետրվարի 5-ը ժամը 18:00-ն:

Հասցեն՝ Արմավիրի մարզ գ. Խանջյան 5-րդ փողոց 7 շենք:

